


# ԺԱՊԱԼ ՄՈՒՍԱՅԻ

## ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

2007 թուականին ի վեր, Զեսրուան - Ֆըթուհ շրջանին մեջ կը գործէ «Ժապալ Մուսայի պաշտպանութեան միութիւն»ը, որ գնահատելի աշխատանք տարած է իր նպատակներու իրականացման ուղղութեամբ:



Ժապալ Մուսա «բնական պահուստ»ի (ռեզերվ) կեդրոնը կը գտնուի Զեսրուան - Ֆըթուհ շրջանին մեջ եւ կը յատկանշուի իր տարբեր բարձրութիւններով, որոնք կը տարուբերին արեւմուտքի մէջ 350 մետրի եւ արեւելքի մէջ 1700 մետրի միջեւ:

Կեդրոնը կը բովանդակէ բուսեղէնի եւ կենդանիներու եզակի ու տեսակաւոր հարստութիւն մը:

Միութիւնը հիմնուած է 2007 թուականին: Ժապալ Մուսան հռչակուեցաւ ԵՌԸՆԵՍԶԵՕ-ին պատկանող «բնական պահուստ» մը, 2009 թուականին:

### ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Միութեան նպատակներն են հետեւեալները.

- Աշխատիլ կենսոլորտային կրթութեան ու գիտակցութեան գծով:

- Պաշտպանել ու պահպանել Ժապալ Մուսայի մէջ կենսաբանական զանազանութեան հարստութիւնը:

- Կերակենդանացնել ու մշակել Ժապալ Մուսայի մէջ մշակութային արժանիքները:

- Զօրավիգ կանգնիլ տեղական ընկերային - տնտեսական բարգաւաճման գործունեութեանը:

- Տեղական ընկերութիւնը քաջալերել շահարկումներ կատարելու կենսոլորտային զբօսաշրջութեան եւ բնական հարըստութեան տնօրինումին գծով:

### ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ

-Տարածել եւ աշխուժացնել կենսոլորտային զբօսաշրջութիւնը:

- Աշխատանքի առիթներ ստեղծել շրջանի զաւակներուն (թուրիսթական ուղեցոյցներ, պահակներ, յատուկ արհեստներ)...

- Լեռնային վայրերէ ներս տուներ վերանորոգել:

- Յստակ ուղեգիծերու սահմաններէն ներս պաստառներ տեղադրել՝ քալելը դիրացնելու եւ լեռնային տեսարանները վայելելու համար:

- Տիպար խոհանոց մը կերտել, գործակցութեամբ Ժապալ Մուսայի գիւղերէն տիկիներու, տնային արտադրութիւնները շուկայ հանելու նպատակով:

- Գիւղերու բնակիչները քաջալերել անոնց բնակարանները հիւրընկալութեան տուներու վերածելու ճամբով:

- Գիւղացիներէն հողաշերտեր վարձու առնել եւ երեք ծաղկանոցներ պատրաստել:

- Մանուկներու յատուկ կրթական - կենսոլորտային պատմութիւններու հաւաքածոյի մը հրատարակութեան ձեռնարկել «Թապալի Արկածախնդրութիւնները» խորագիրին տակ:

### ԳԼԵԱՎՈՐ ԳԻՂԵՐԸ

«Ժապալ Մուսայի պաշտպանութեան միութիւն»ը իր գործառնութեան ծիրին մէջ ընդգրկած է հետեւեալ գիւղերը.

Եահշուշ, Ղապալէ, Ղահմազ, Լահըր ալ-Տահապ, Այն ալ-Տըլպէ, Ապարա, Շուան: